

Ա Ս Տ Ե Ղ Ա Տ Ո Ւ Ն

Հոգին որ փուկ էր ինչպէս ուրախութիւն մը եղած
 Ըստասելի՜ օրերու նաւին վրայ լուսաբն,
 Ի՞նչ քրիւր զայն. ո՞ր ալօսն իր ծոցին մէջ է պահած
 Անոր ցորենը ոսկի, անոր խոստումն յարատեւ...

Անիկա շունչն էր հովին, ու ծիծաղն էր ջուրերուն,
 Ծափը ձեռքի մը փոքրիկ ի սեւ խաղի պատկերին,
 Ի՞նչ քրիւր զայն որ այսպէս եղաւ ցրնո՞ւր մթնոլորտն,
 Ու գաղտնիքին մէջ անոր փառէ դէմքեր կը յառին...

Գըճի՛ր համբան ըսպիտակ ուրկէ անցաւ իր աղօտ
 Բարի տեսիլքը նրման երազասոյր եղնիկի.
 Կախարդալոյս այդ ուղին կ'առաջնորդէ հեռաւոր

Ասեղասունն աւերակ ուր քեզի հետ կը դառնայ
 Ինչպէս տօնի մը օրումն պատմութեանին մէջ ոսկի
 Հոգին որ ծնաւ արցունքէն աստուածներուն՝

Ո՛րք տղայ...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր Ն. Ա Դ Ո Ն Ց Ի

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ», ԳՈՐԾԻՆ

Ամենապատիւ Պատրիարք Հօր Տ. Թորգոմ Արքեպիսկոպոսին

Երուսաղէմ

Հա՛յր Սրբազան,

Յաւում եմ որ աւելի կանուխ կատա-
 րել Ձեր յանձնարարութիւնը հնարաւոր չե-
 դաւ, որքան և հաճելի և քաղցր պարտա-
 կանութիւն կը նկատեմ ինձ համար շուտա-
 փոյթ ընդառաջել Ձեր բոլոր ձեռնարկնե-
 րին: Այժմ էլ զրուս եմ տողերս այնպիսի
 վիճակում, որ յուսամ ներողամիտ պիտի
 լինիք եթէ չկարենամ լիովին գոհութիւն
 տալ Ձեզ:

Կարդացի Հ. Աճառեանի նոր գործը և
 ա՛նա՛ տպաւորութիւններս քանի մը տողով:
 Զգլտեմ, պէտք կա՞յ յայտնելու սկզբէն և
 եթ որ Սրբազնութեանդ ընտրութիւնը մի-
 անգամայն յաջողակ է և գործը արժանի
 այն վարձատրութեան կամ պարգևատրու-
 թեան որ ի նկատի ունիք:

«Հայոց լեզուի պատմութիւն»ը մի հա-
 մադրական փորձ է, մի ամփոփումն այն
 գիտական յանդումներին որ հին և նոր հե-

տաղօտութիւնները արձանագրել են ցարդ որպէս ստոյգ և կամ հաւանական այս կամ այն չափով: Հեղինակը կատարել է այս փորձը ամենայն ձեռնհասութեամբ և հաւատարիմ այն սկզբունքներին և ղեկավար մեթոդներին, որոնցմով ձեռք են բերուած ամփոփելի նութերը: Շնորհիւ ներկայ աշխատութեան, ունինք այժմ մեր առջև հայ լեզուի պատմական հասակը իր զարգացման և կամ կեանքի բոլոր շրջաններում, և բնականաբար զիւրին պիտի լինի այսուհետև լրացնել պակասը կամ յապաւել աւելորդը և ճոխացնել զիտութեան նորանոր բերքերով և փոփոխել փոփոխելին: Հեղինակը փոյթ է ունեցել ներկայացնել լեզուի կրած փոփոխութիւնները քաղաքական պատմութեան համապատասխան շրջանակներին մէջ, և հանել է այն եզրակացութիւնները որոնք ծառայում են ուրուագծելու և մեր քաղաքակրթութեան յարաճողով պատկերը:

Գործի մի խոշոր մասը նուիրուած է լեզուական բառամբերին: Հայ լեզուի բնիկ ատաղձը կազմում են, ըստ հեղինակի, 600 բառ. յաջորդ շերտերն են փոխառեալ բառեր — իրանական՝ 750 բառ, յունական՝ 776, արաբական կամ արաբ-պարսիկ՝ 801 և այլն: Այս վիճակագրական թուերն այն տպաւորութիւն են թողնում որ կարծես հեղինակը վերջնական և անվերափոխելի է համարում այն ինչ որ ցարդ կատարուած է, մինչդեռ խոհեմութիւնը պահանջում է ձեռքնադրած մեալ թուական սահմանափակումներին: Ամէն մի նոր հետազօտութիւն կարող է խանգարել այդ ժամանակաւոր հաշիւները: Մեզ թւում է որ բացեր կան գրեթէ բոլոր բառախմբերում: Առանց որեւէ ջանքի, աչքիս ընկաւ որ բնիկ հայ բառերի թւում պակասում են՝ աղեղն, քամբ, պսուղ. իրանական խմբի մէջ չգտայ՝ ֆրամատար (framatar) (ոչ հրամանատար), խաւաւաւան, որպէս թէ նշանակում է սպարապետական աստիճան, մինչդեռ պահլար(a)varan բառն է եւ նշանակում է արեւմուտք. վիրական բաժնում պակաս է՝ սեյիմուղ. յունական՝ զաւռալիս՝ պատկերագործ՝ (Ստեփ. Օրբ.) = յ. Ζωγράφος, կամ սեյիւարիս (Ուոհ.) որ բիւզանդ. εστριφάρիս կամ հետերիարիս εστριφάρης, բառի աղճատումն է, չկայ նաև եմպուլիոն (բշխ)՝ Ասորերէն՝ Թշրին և Իւոգի կից մոռացել է

յիւշել բովր (Տիմ.), իյար, փոպի, փիֆոն (Դիրք թղթ). արաբերէն՝ չտեսայ նալաս, սառայպուլա (Թլիուրացի բառերը): Այլ չեմ յիշում, որ բոկեղ ղնում է որպէս թէ փոխառեալ վրացերէնէ, մինչդեռ Βουκέλλας = կոր հաց, յունարէն բիւզանդական բառն է. սահմի, հոռի, ոչ մի կապ չունին վրացերէն օրի և սամի, 'երկու, երեք' բառերի հետ, ինչպէս ենթադրել է Պատկանեան եւ ընդունել Աճառեան: Իմ կարծիքով հին ասոր. Airu, Simanu երկրորդ և երրորդ անունների անունն է: Այնտեղ է ծագում իրանական և մեր տոմարը: Վրաց ամիսները յայտնի են, եւ այնտեղ ոչ օրի եւ ո՛չ սամի հետքեր չկան: Գալասոս 'որմնագիր' բառը ևս վրացի ծագում չունի, այլ պարզապէս Գալասացի է նշանակում: Ինչպէս երևում է հնում յայտնի են եղել Գաղատացիք որմնագրութեան արհեստում: Այս աւելի քան թուուցիկ օրինակները բաւ են ցոյց տալու համար թէ որքան յանձնարարելի չեն թուական սահմանադրումները: Մի քանի տարի առաջ առիթ ունեցայ ծանօթանալու նիւերդ պահլաւագէտին, որ յայտնեց ինձ, ի միջի այլոց, որ աւելի քան հազար իրանական նոր փոխառութիւններ է գտել հայերէնում պահլաւիկ մատենագրութեան յիշատակարանները վերծանելիս:

Մի ուրիշ հանգամանք: Հ. Աճառեան նպատակ ունի ներկայացնել լեզուն որպէս քաղաքակրթութեան յայտարար: Այս գէպքում անհրաժեշտ է խստիւ պատնէջ քաշել երկու կարգի օտարամուտ բառերի միջև, այն է փոխառութիւնների (Lehnwörter) և օտար բառերի (Fremdwörter): Մէկը կազմում է լեզուի բաղկացուցիչ մասը, ձուլում է և, այս գէպքում, հայանում, միւսը մնում է իր օտարութեան մէջ ի բնէ մեռած տարր լեզուի համար և անարժէք քաղաքակրթութեան պատմութեան համար: Հ. Աճառեան, հարկաւ, քաջ զիտէ այս զանազանութիւնը եւ գործի ընթացքին ստիպուած է եղել անջատել որեւէ կերպ յիշած երկու տարրերը: Աւելի լաւ կը լինէր անտարակոյս հէնց սկզբից անտես անել օտար բառերը ի նպաստ հարցի պարզութեան և առանց աւելորդ բռն զննելու լեզուի վերայ:

Հեղինակը լայնօրէն է գծել իր աշխա-

տանքը, բաժին հանելով ընդհանուր լեզուագիտութեան: Կանգ է առել միջերկրական քաղաքակրթութեան ազդեցութեան լեզուական հետքերի վերայ յունականում: Բայց զարմանալի է, որ հազիւ քանի մի բառ է գրաւել նրա ուշադրութիւնը, այն բառերը որ յիշել է Մեյլէն իր մի աշխատութեան մէջ: Սակայն նորագոյն գործերը հաշուում են այդպիսի փոխառութիւններ հարկերաւոր բառերով, թուած օրինակի համար. G. Glotz La Civilisation Égéeenne, p. 441.

Հայ-Ֆոնլուական առնչութեան նայող վերջին հետազոտութիւնները անձանօթ են մնացել մեր հեղինակին. R. Meister (Ind. For. 25, p. 312) E. Hermann (K. Z. 50) այն միանգամայն նոր տեսութիւն յառաջ բերին որ ֆոնլ. լեզուն ոչ թէ *saten*, այլ *centum* լեզուախմբին է պատկանում: Այսու կարծես հայի և ֆոնլ. անջատը աւելի մեծանում է, բայց միւս կողմէն պարզւում է որ հնչաբանական մեծ օղակով կապւում են երկու լեզուները, (մանաւանդ *mutaiter consonantique*, այսինքն միջակների լերկացումը): Հայերէնը կապւում է նաև Թուրքերէնի հետ, և այս կարեւոր է: Ինձ թւում է որ այս նոր կապը մեզ հասկանալի պիտի դարձնէ Թուրք բերդի կոչումը-Տայքում, ինչպէս և Տուհ կոչուած ժողովուրդի ինքնութիւնը և թերևս մի նոր վարկածի դուռ պիտի բաց անէ Մամիկոնեանների ծագման աւանդութեան:

Հ. Աճառեան շատ անգամ դուրս է եկել Հիւրշմանի զգուշաւոր սահմաններից, ընդունելով ստուգաբանութիւններ, որ նա ժխտել է կամ կասկածելի է համարել: Շատ խնդիրներում աշխատել է ուրոյն տեսակէտ ունենալ և միշտ չէ յաջողած: Սակայն նման երեւոյթները չեն մնասում գործի ընդհանուր պատկերին: Մասնաւորապէս աչքի է ընկնում այն մեծ բաժինը որ Աճառեան յատկացրել է վրացի և խաղական փոխառութեանց, հակառակ Հիւրշմանի դրականօրէն յայտնած տրամադրութեան: Հայ-վերական լեզուական աղերսին յատկացրած գլուխը, կարելի է ասել, գործի տկարագոյն էջերն են: Մեր հեղինակը թւում է թէ հաստատապէս որդեգրել է այն համոզումը, որ բոլոր այն տարրերը, որ ոչ իրանական են, ոչ սեմական, ոչ զուտ հայ-

կական, ծագում են խաղական լեզուից: Չափազանցութիւն է և բոտ էութեան առանձին կարեւորութիւն չունի, քանի որ լեզուագիտութիւնը ոչինչ չի շահում, անյայտը մի ուրիշ անյայտի է վերածում: Բացի սրանից, նախահայ բնիկները լեզուն միայն խաղերէնը չէր: Խաղերի նման տասնեակ ցեղեր կային, որոց փոխադարձ լեզուական կապը մնում է անյայտ: Աւելի խոհեմ կը լինէր հայ բառարանի տակաւին անվերձանելի մթերքը համարել մի շտեմարան, ուր առնելիք ունի և զուտ հայկականը, և՛ իրանականը և՛ անձանօթ նախաբնիկ լեզուները:

Բառամթերքի քննութիւնից յետոյ Հ. Ա. անցնում է գրական լեզուի ծագման և ընթերցանից հարցերի: Տեղ տեղ հեղինակի գրիչը սայթաքում է դէպի հակասութիւններ, որ պէտք է բացատրել անուշադիր կամ շտապ գրութեամբ: Հին *patar* ձեւը, հեղինակի կարծիքով, զբառ ուչ և այն Ն. դարում միայն եղել հայր» (էջ 32): Յաջորդ էջում կարդում ենք, որ հայր ձեւը գոյութիւն ունի Յ. Ք. 200 թուից: Երկու վկայութիւններն էլ հաւասարապէս սխալ են: Հ. Ա. երկար ու բարակ քննում է թէ գրաբարը խօսակցական լեզու էր թէ արուեստական և գալիս է այն եզրակացութեան որ գրաբարը Ն. դարում «ճշգրիտ ժողովրդի խօսակցութեան լեզուն է» (էջ 244): Հետեւեալ գլխում, ոսկեղարեան հեղինակների մօտ եղած բազմաթիւ անհարթութիւնները և սխալները ուղւում է բացատրել նրանով որ հեղինակները գործ են անել «արուեստական լեզու և ոչ ժողովրդի բարբառ» (էջ 268): Այս ակներև հակասութիւնը հասկանալի կը դառնայ եթէ ընդունինք որ հեղինակը ճշգրտօրէն չի արտայայտել իր միտքը: Ամէն մի լեզու որ արձանանում է գրով արդէն դառնում է արուեստական համեմատութեամբ կենդանի և չըջուն լեզուի: Բայց այս չէ նշանակում բնաւ որ գրականը այնքան է հեռանում, կամ Ն. Դ. այնքան էր հեռացել իր ծննդեան տարիքէն որ ժողովրդեան հասկանալի չէր: Հ. Ա. սակայն պէտք է զգացել շեշտելու չափից աւելի գրաբարի ժողովրդական լեզու լինելը, որպէս զի յառաջ տանի իր միւս կարծիքը, որ Ն. դարում հայ լեզուն բարբառներ չունէր և պատրաստ է ժխտելու

Ստեփանոս Սխենցու բացայայտ վկայութիւնը ազաւաղ եւ անհիմն մեկնաբանութեամբ: Եթէ Հ. Ա. այն գրութիւնը պաշտպանէր որ բարբառների բացատրման էէր Ե. դարում, ինչպէս հետազոտում, կարելի է համաձայնել: Բայց հիմնովին բացասել, ոչ մի բանաւոր հիմք: Նոյն խակ իր բերած քաղաւածներում նկատուում են աշխարհաբարի հետքերը, ինչպէս ստորագրականի ղեղջը և ներկայի գործածութիւնը ստորագրականի իմաստով (եթէ զայ ինձ, ևս ոչ սպանանմա): Ինչպէս և մեկնենք բարբառների ծագումը, պէտք է ընդունինք որ այս խնդրում առաջնակարգ ղեր են ունեցել աշխարհ ընկնները: Եթէ հայ զանգուածը բաւական ոյժ է ունեցել հարկադրելու իր լեզուն երկրի կենտրոնական մասերում, ուր հոժ մեծամասնութիւն է կաղմել, նրա աղղկցութիւնը համեմատաբար տկար պէտք է լինէր ծայրագաւտներում, ուր բնակչութիւնն աւելի խառն էր: Այս հանգամանքը արդարացնում է հիմնովին եղերական բարբառների գոյութիւնը: Հ. Ա. հնարաւորութիւն ունի ղիտելու թէ ինչպէս երևանի բարբառը հետղհեաէ և ղերթէ առտիճանաբար փոխուում է Դարբաղի (Սրցախի) բարբառին, անցնելով Սխիանի բարբառից ղէպի Տաթեւի և այնտեղից ղէպի Եուշի:

Նորագոյն բարբառների մասին նոյնպէս Հ. Ա. այն կարծիքն է յայտնում որ նրանք ոչ յառաջ քան 9-12 դարեր են ծագել: Բայց ղժրախտաբար ղի բացատրում թէ որոնք էին այն նոր աղղակները, որ յանկարծ ծուատեցին նախկին միապաղաղ լեզուն ղանաղան բարբառների: Թ-Ժ- դար համեմատաբար պայծառ ղրջան է Հայոց պատմական անցեալում, երբ փոքր նախարարական տները միանում են խոշոր կենտրոններ ստեղծելու և իրանք անհետանում մեծ միութեանց մէջ: Հ. Ա. ի տեսակէտը այս խնդրում անհատական է, ղոնէ մերը ղէ. և այն փաստարանութիւնը, որ բերում է ինպատ իր տեսութեան, ի վիճակի է որոշելու բարբառների Terminus ad quem, բայց ոչ a quo:

Բարբառների գոյութիւնը ժխտելուց յետոյ, երբ անցնում է Նորայրի տեսութեան սակեղարեան ղորս կարգի հեղինակութեանց վերաբերեալ, և արդարացի քննութեան է ենթարկում և Նորայրի տեսութիւնը, նրա

ղիտած տարբերութիւնները վեր ածելով պարզ ոճաբանական խորութեանց, յանկարծ նահանջում է բռնած ղաղից և ընդունում որ կային եղնիկեան և Կորիւնեան բարբառներ: Այս ևս մեր տեսակէտը ղէ:

Աշխատութեան այն մասը որ նուիրած է ժամանակակից բարբառների նկարագրութեան և ղասաւորութեան ղատ աւելի պէտք է բարձրացնէին ղաշխատութեան արժէքը, եթէ աւելի մանրամասն լինէր: Հ. Աճառեան այս կալուածում կատարեալ տէր և տիրական է: Ոչ ոք ղղիտէ նրա նման մեր բարբառները: Ո՛րքան ցանկալի կը լինէր, որ այս մասը աւելի ղոխ լինէր, ստորաբաժումները լիովին թուած հանղերձ հընչաբանական և ղեաբանական ղատկութիւններով, քանի որ բարբառները կորստեան վտանղի առաջ են կանղնած և հետաղային անհնարին պիտի ղառնայ նրանց ուսումնասիրութիւնը:

Ձերկարեմ այլևս: Նկատողութիւններս յոյց են տալիս որ Հ. Ա. ի երկը իրապէս կարեւոր է և արժանի Ձերղ Սրբաղնութեան քաջալերութեան և ղնահատման: Ձեմ կարծում, որ ղայտնածս կարծիքները օտարտի թուին Ձեղ, ղստահ եմ, որ նոյնանման տղաւորութիւն է ղործել նաև Սըրբաղնութեանղ վերայ:

Մնամ սղասաւոր պատրաստակամ Ամենաղաալիւ Հաղրութեանղ, ղարղալիր ողջիւնօք

միշտ անձնուէր
Ն. ԱԴՈՆՑ

23 Օգոստոսի 1934
Երիւսալ

ԽՈՐՀՈՒՐԳ ԵՒ ԽՕՄԵ

Ժամանակի վերաքիւրմաք աղան. ղսանք մեր միկ վայրկեանը, առանց ընղունելու անոր արժիքը. ղրողունք որ ժամերը ղոպղոքեն և անղսող ղուրս ելենք մեր ղեղերեն... ղներեմք որ մեր միկ օրը սանի, առանց ասուարղներու մեր ժաւօրութիւններուն և առաքիւնութիւններուն ղանղը: